

ERASMUS+ BOOST ծրագրի շրջանակներում հայկական պետական մանկավարժական համալսարանում կայացած վերապատրաստում (2018թ. դեկտեմբերի 12)

ERASMUS+ BOOST ծրագրի շրջանակներում Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում 2018թ. -ի դեկտեմբերի 12-ին կայացավ վերապատրաստում, որի ընթացքում ծրագրի հայաստանյան գործընկերները ներկայացրեցին իրենց փորձը համալսարանների միջազգայնացման, ակադեմիական շարժունության, զարգացման հեռանկարների, անհրաժեշտ միջմշակութային հաղորդակցման հմտությունների ձևավորման վերաբերյալ, ինչպես նաև ներկայացրեցին բուհերի միջազգայնացման ռազմավարության ուղղությամբ BOOST ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքները:

Վերապատրաստմանը Երևանի պետական կոնսերվատորիայի ներկայացուցչի հետ միասին զեկուցումով հանդես եկավ ՇՊՀ արտաքին կապերի պատասխանատու Ասյա Հարությունյանը՝ ներկայացնելով միջազգայնացումը ներքին ուժերով իրականացմանն ուղղված գործընթացները:

Վերապատրաստման մասնակից բուհերը կարևորեցին նման վերապատրաստումների հաճախակի իրականացումը և համագործակցությունը ծրագրի մասնակից բուհերի հետ՝ հետևելու ծրագրի զարգացումներին և վերջնարդյունքներին:

[Training agenda](#)











